№ 240 ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 — 1901 — ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 № 240

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԴՐԻՉՆԵՐԻ ԱՐԽԻՎՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ. օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր առաջաւորին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Գրօշ չարժէ ձեր պարծենալը. Մատենագրութիւն. Հայոց թատրօն. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Այս շաբաթը մի շատ զարմանալի շաբաթ էր։ Մեզ, գրողներիս, շատ քիչ է պատահում տեսնել այսպիսի օրեր։ Միմեանց ետեւից ժարդիկ են գալիս մեր խմբագրատունը, խօսում են, վիճում են. թռչում են նամակներ այս ու այն կողմից. բողոքներ, ուժգին, սաստիկ բողոքներ, անխնայ յարձակումներ։ Միւս կողմից բացատրութիւններ, հերքում։ Մի խօսքով—աներեւակայելի ժխոր։ Խանգարված են խմբագրական խաղաղ պարապմունքները, չը գիտես ինչ անել. օրվայ ընթացիկ գործերը կատարել, թէ խառնվել խօսակցութիւնների ու բացատրութիւնների մէջ։ Կարելի է վստահ կերպով ասել, որ եթէ «Մշակի» խմբագիրն ու աշխատակիցները այս ամբողջ շաբաթ հրաժարվէին ճաշից, քնելուց եւ 24 ժամ անընդհատ նստէին խմբագրատանը, խօսակցութիւնները դարձեալ չէին ապառվի մի օրում, երկու օրում։

Այո, զարմանալի շաբաթ։

Ի՞նչ կար, ինչն էր յանկարծ անսպասելի կերպով փոթորկել այն նեխված ճահիճը, որի մէջ օր օրի վրա փտում է այն փայտացածփված դիակը, որին մենք հասարակական կեանք անունն ենք տալիս։

Կար մի բան, որ տանում էր ժարդկանց դէպի լրագիրը։ Կար մի ստիպողական պահանջ, որ անհրաժեշտ էր դարձրել լրագրի միջամտութիւնը։ Ի՞նչ էր դա։

Բարձրացել էր մի ամբողջ փոթորիկ։ Բայց փոթորիկ, ինչպէս ասում են, մի բաժակ ջրի մէջ։

Դուք, երեւի, գիտէք, թէ ինչպէս է սկսվել նա։ «Մշակի» մէջ տպված են մի քանի տեղեկութիւններ։ Անցեալ կիրակի երեկոյեան Թիֆլիսի ժողովարանում հայոց ներկայացում էր։ Վոդեվիլի ժամանակ ներկայ եղող մեծ բազմութեան մէջ նկատվում են դժգոհութիւններ։ Այս ինչ է, ասում են հանդիսականները եւ չեն հաւատում իրանց ականջներին, մասամբ եւ աչքերին։ Պասկվիլ... Բեմի վրա ակնարկութիւններ կենդանի ժարդկանց մասին։

Ահա ինչն է բարձրացնում բողոքների մի ամբողջ տարափ...

Գործված է արուեստը։ Բեմը, հասարակական այդ օրբարանը, բալագան է դարձրած։

Որքան վրդովմունք, որքան կրակ, պերճախօսութիւն։ Հիանալի է։ Մարդ լցվում է մի գեղեցիկ, ոգեւորիչ զգացմունքով։ Ա՛հ, ինչքան լաւ է, ահ, ինչքան կենդանութեան նշաններ է ցոյց տալիս մեր հասարակութիւնը։

Եւ այդ պատմութեամբ զբաղվել չեմ ուզում։ Գիտէք որ դերասանական խումբը ներկայացրեց «Մշակի» խմբագրութեան պիեսի բնագիրը եւ ցոյց տուեց, որ այդտեղ պասկվիլ չը կայ, խումբը ներկայացրել է պիեսը, ինչպէս նա թարգմանված է։

Այդ բացատրութիւնը մի քանիներին բաւարարութիւն չը տուեց։ Շարունակվում են բողոքները պասկվիլի դէմ։

Եւ չեմ քննում ո՞վ է արդարն ու մեղաւորը։ Եթէ կամենաք, ես նոյն իսկ թոյլ եմ տալիս, որ առհասարակ հայ դերասանները կարող էին պասկվիլ ներկայացնել։ Եւ ինչ եմ գտնում։

Ո՞վ է հայ դերասանը—Հայկական իրականութեան հարազատ զաւակ։ Նա այդ իրականութիւնից է ստանում հասկացողութիւններ, ճաշակ։ Նա հասարակութիւնից դուրս չէ կերթվում, պատրաստվում։ Նա մեր մէջ է ապրում, մեր օդն է ծծում, մեր ջուրն է խմում։ Դուք նրան մի նայէք, այդ դերասանին։ Նայեցէք այն գործօններին, որոնք ազդում են նրա վրա, նրա բնաւորութիւնն են պատրաստում։

Ահա ձեր առջեւ են մեր հասարակութիւնը, մեր ժամուլը, գրականութիւնը։ Հարցրէք նրանց՝ ինչ կրթութիւն են տալիս նրանք։

Պասկվիլ, այո, կեղտոտ, վատ բան։ Զզուելի բան. նա մի թունաւոր բոյս է, որ կարող է սպանել մեր ամբողջ ժառաւոր կեանքը, մեր առաջադիմութիւնը, մեր ամբողջ ապագան։

Ի՞նչպէս է այդ թունաւոր բոյսը մեզանում։ Նայեցէք։ Նա աճում, զարգանում է, նրան չէ պակասում ոչ մի նիւթ մեծանալու, ամեն կերպ բարգաւաճելու համար։

Պասկվիլ... Դուք սարսափում էք նրանից։ Բայց որտեղ չը կայ նա։

Կարդում էք վէպ,—պասկվիլ է։ Կարդում էք բանաստեղծութիւն—պասկվիլ։ Իսկ մամուլը։ Ուրիշ ինչ պաշար ունի նա՝ իր գոյութիւնը պահպանելու համար, եթէ ոչ կեղտոտութիւններ եւ միայն կեղտոտութիւններ։

Հայը բարձր, վերացական գաղափարներով ապրել չէ կարող։ Հային պէտք է տալ անձնաւորութիւններ, գծուած, ժանր մուներ հաշիւներ։ Հայը շտապում է տեսնել ոչ թէ մտքին ու հոգուն կերակուր տուող պատկերներ, տիպեր. նա վազում է, հեւալով բռնում է այնպիսի բաներ, որոնց մէջ տեսնում է այս կամ այն անձին, տեսնում է, թէ ինչպէս են նրան խայտառակում, ցեխի մէջ տրորում։ Ընտանեկան կեանք, մասնաւոր, անհատական գործեր—տուէք մեզ այդպիսի բաներ։ Մեր ինչներիս են Օտելլոները, Համլէտները, ինչ գործ ունենք հասարակական գաղափարների հարցերի հետ։ Դուք հրապարակ էք հանում մի վաճառականի ներքին, ընտանեկան կեանքը. մենք ճանաչում ենք նրան, նա կենդանի է, ման է գալիս մեր մէջ։ Եւ մենք հոգի կը տանք ձեր ներկայացրած այդ ժանաւոր տեսարանը դիտելու համար։

Հայոց դժբախտ բեմը այդպիսի տեսարանների, ստոր, զզուելի պասկվիլների հանդէս դարձել է շատ անգամ։ Ցիշում ենք, մի քանի տարի առաջ այդ բեմը ապականում էր «Մօղա է, քա» խայտառակ պասկվիլը։ Նա ներկայացրվեց մի քանի անգամ եւ ամեն մի անգամ թատրօնը այնքան լցվում էր, որ տեղակ չէր ճարվում։ Հալաբարից Կուկիա, Կուկիայից Վէրա լուրեր էին ուղարկվում. «Այսօր այս ինչի պատմութիւնն են ներկայացնում, հաւաքվեցէք, որ գնանք»։ Եւ գնում էին, անվերջ շարաններով էին գնում տեսնելու։

Ահա հասարակութիւնը, ահա եւ նրա կրթած հեղինակները, դերասանները։

«Մշակը» բողոքեց։ Բայց հայոց ապականված մամուլը, ուր վաղօրօք տպված էր այդ խայտառակ պասկվիլը, վայնասուն հանեց, փառաբանեց այդ խայտառակութիւնը։ Իսկ մի երկու տարի անցնելուց յետոյ, նոյն հասարակութիւնը տանում էր «Մօղա է, քա»-ի հեղինակի յօբելեանը, մատուցանում էր նրան «անմահ» տիտղոսը...

Ի՞նչպէս չը զարգանայ պասկվիլը։ Ի՞նչպէս նա միակ հասկանալի «գեղարուեստը» չը դառնայ մեզանում, երբ ժամուլը սիրում, պաշտում է նրան, առանց նրան ապրել չէ կարող։ Այդ մամուլն էր, որ «Աստառի» տպագրութեամբ անպատում էր մեր մեծ բանաստեղծի լիշատակը։ Նոյն իսկ Թալմ գեբեզմանը, ուր նոր էր մտել այդ բանաստեղծը, չը կարողացաւ զսպել հայի կիրքը, անձնական հաշիւներ տեսնելու կատաղութիւնը։ Նոյն այդ ժամուլն էր, որ տպագրում էր ամենակեղտոտ պասկվիլներ Սեդրակեան եպիսկոպոսի մասին։ Եւ գրողը, մի մութ արարած, հռչակվում էր տաղանդ։

Քանիսնքը յիշեմ այստեղ։ Օրեր են հարկաւոր՝ հայ ժամուլի արատները հաշի մէջ հաւաքելու համար։

Հետեւանքը։ Այն կարող էր լինել հետեւանքը, որ մեզանում կորաւ գեղարուեստի նշանակութիւնը, հասկացողութիւնը։ Պասկվիլը ժառաւ վէպի, պիեսի մէջ։ Դա էր յարմարվում հայի բնաւորութեան։ Այդ տեսակ «գեղարուեստն» է սիրում հասարակութիւնը։ «Ի՞նչ լաւ նախչել է», ասում է մէկը։ «Կարդացէր, հարցնում է միւսը.—դուրս են բերված այս ինչը, այն ինչը, երրորդը, չորրորդը»։ Եւ մենք վէպի, պիեսի, յօդուածի քննադատութեան մէջ այլ եւս միտք չը պիտի որոնենք, այլ միայն անձնաւորութիւններ, ծանօթ դէմքեր, գոյութիւն ունեցող անուններ։

Ինքնասպանութիւն է դա։ Մէջտեղ այլ եւս ստեղծագործական շնորհքի, գաղափարի հարց չը կայ եւ չը պիտի լինի։ Կիրակնօն է սա, որ դուրս է բերված վէպի, դրամայի, վոդեվիլի մէջ։ Ա՛, շատ լաւ, շատ լաւ, ես կը կարդամ, ես կը գնամ տեսնելու. հետաքրքրական է...

Եւ շատ քչերն են մեղանում, որոնք զզվում են այդ գրական գարշահոտութիւնից, երես են դարձնում ապականութիւնից։ Բայց պասկվիլը ոչ վախում է դրանից, ոչ ամաչում։ Նա առաջ է գնում եւ առաջ կերթայ։ Հայը անձնասէր է, անձնամոլ է։ Հայի համար գեղարուեստը միայն անձնականութեան շուրջը կարող է գոյութիւն ունենալ։

Այս ամենից յետոյ եկէք եւ դատապարտեցէք դերասանին, որ բեմի վրա խաղալիս՝ այս կամ այն անձին է նմանեցնում իր շարժուածքները, իր ձեւերը։ Ո՞վ է մեղադրում։ Դուք։ Քրիստոս հրաշալի պատասխան է տուել կեղծաւորներին. «Ով որ արդար է, թող նա ձեռք բարձրացնէ»։

Այո, ո՞վ է այստեղ արդարը։ Հասարակութիւնը, ժամուլը, թէ գրականութիւնը...

Ոչ մէկն էլ։ Միմեանց արժեն։ Միմեանց կրթում են, միմեանց ղեկավարում են։

Մի դերասան պասկվիլ ներկայացնող է դուրս գալիս։ Մեղադրում էք դուք, շատ լաւ էք անում։ Բայց ես հեռու եմ գնում, չարիքի արմատին եմ հասնում։

Եւ ասում եմ։ Ինչից պիտի դաս առնէ դերասանը։ Մամուլից, հասարակութիւնից։ Բայց նա երէկ, անցեալ օրը, շաբաթների, ամիսների, տարիների ընթացքում կարդում էր լրագրի մէջ կեղտոտ, անձնական ինսինուացիաներ, ծաղծուութիւններ, կարդում էր վէպէր, տեսնում էր նրանց մէջ պասկվիլ, իսկ հասարակութիւնը անտարբեր էր, հասարակութիւնը կարդում էր, հասարակութիւնը յօբելեաններ էր սարքում։

Ինչ անէ խեղճ դերասանը։ Նրանից ուրիշ բան չէ կարող դուրս գալ, բայց միայն պասկվիլնա։ Նա տիպ պիտի ներկայացնէ, բայց ներկայացնում է դէմք։

Դա բնական է, պարոններ։ Մի վրդովվէք։ Եթէ հայելու մէջ անճոռնի է երեւում դէմքը, մեղաւորը հայելին չէ։

Մաքուր, ազնիւ գեղարուեստի սերմեր էք ցանել, որ մաքուր գեղարուեստ պահանջէք։ Պատժել էք արատաւոր գրիչները, որ պարտաճանաչ, չիտակ ու իր նշանակութիւնը բարձր պահող ժամուլ ունենանք։

Ինչ տուել էք, այն էլ ստանում էք։

Բայց ինչ են նշանակում այս շաբաթվայ բողոքները։ Մթթէ արատաւոր հասարակութիւնը հասկացել է իր մեղքերը. մթթէ նա զարթնել է, մթթէ վճռել է այսուհետեւ խիստ լինել, այսուհետեւ պահանջել իրան ծառայողներից բարոյական մաքրութիւն, ազնուութիւն։ Եւ մթթէ հասարակական այս ասիճան մեծ դիւրազգացութիւնը մի նշան է, թէ մեզ համար բացվում է նոր, սիրուն օր։

Ահա դժուար հարցեր։ Եւ, որ ճանաչում եմ մեր հասարակութիւնը, դեռ չեմ հաւատում։ Կապրենք, կը տեսնենք։

Բայց այժմ էլ չեմ կարող ամբողջ սրտից չը ցանկալ, որ դուք, ընթերցող, դրական կերպով «այո» պատասխանէք այդ հարցերին...

Լ.

ԳՐՈՇ ՉԱՐԺԷ ՁԵՐ ՊԱՐԾԵՆԱԼԸ

«Մշակի» № 23-ի մէջ մենք կարդացինք պ. Լ. Կ.-ի՝ Գամառ-Քաթիպայի մահվան 10-ամեակի առիթով յօդուածը։ Գամառ-Քաթիպայի մահվան տասնամեակը լինելու է միայն 22 օգոստոսի 1902 թուի։

Բայց այդ դեռ մեծ սխալ չէ. մեծ սխալ է պ. Լ. Կ.-ի պնդածը, թէ Նոր-Նախիջեւանը ոչնչով չէ կատարել իր պարտականութիւնը դէպի իր հարազատ Գամառ-Քաթիպան։ Բանաստեղծի արձանի գումարի համարեա կէսը տուել է Նոր-Նախիջեւանը եւ միայն մնացած կէսը «ամբողջ ազգը», այն «ամբողջ ազգը», որ «այսօր Ռ. Պատկանեանով» պարծենում է...

Ահա էլի փաստեր։

Նոր-Նախիջեւանը իր հաշւով ուղարկել էր բանաստեղծին Կովկաս՝ բժշկվելու։

Նոր-Նախիջեւանը իր հաշւով թաղեց նրան։

Նոր-Նախիջեւանը նրա մահվանից յետոյ մինչեւ այսօր, ինը ձիգ տարիներ, շարունակում է տալ նրա կնոջը եւ զաւակներին օժանդակութիւն տարին վեց հարիւր բուբլի։

Ես կը խնդրէի պ. յօդուածագրից ցոյց տալ մեզ մի որ եւ է հայաշատ քաղաք, որ մի ուրիշ հայ գրողի համար սրա կէսը, կամ կէսի կէսը արած լինէր։

Ես կը խնդրէի պ. յօդուածագրից խոստովանել, որ աւելի լաւ է անել այնպէս, ինչպէս արեց Նոր-Նախիջեւանցին, քան թէ անուանել մի փողոց բանաստեղծի անունով։ Բաւ են ցոյցերը, հանգամանքները պահանջում են մեզանից գործեր եւ գործեր...

«Ամբողջ ազգը այսօր Ռ. Պատկանեանով է պարծենում»։

Մենք չենք երաշխաւոր։

Մենք չենք հաւատում։

Մենք կասկածում ենք։

Իսկ եթէ ո՞չ, եթէ իրա՞ւ այդպէս է, ուրեմն... գրո՛չ չարժէ ձեր պարծենալը...

Գրոչ...

«Ամբողջ ազգից» մենք երեք հազար էլ չը կարողացանք ժողովել մեծ բանաստեղծի արձանի համար ինը տարվայ միջոցին։

«Ամբողջ ազգից» միայն երեք պարոններ դիմել են մինչեւ այժմ մեզ Գամառ-Քաթիպայի՝ Անդրէաս Տէր-Մարուքեանի պատրաստած հինգ բուբլիանոց մեդալեոններից ձեռք բերելու համար։ Իսկ ինչպէս «ամբողջ ազգը» եւ «ինչ չափով... կատարել է իր պարտականութիւնը դէպի իր Գամառ-Քաթիպան» 35-ամեայ յօբելեանին, երեւում է հետեւեալ երկտողից՝

Մաղրալի ազգ էք, հայեր, դուք, աւաղ,
Ձեր յօբելեանն է մուրացկի դաբախ։

Երեսուն հինգամեայ յօբելեանին բանաստեղծը ստացաւ մի չնչին նուէր եւ փող, գիտէք, որչափ, 50 բուբլի, միայն 50 բուբլի, որ ուղարկել էր արտասահմանից մի հարուստ մեծատուն «Արմենիայի» խմբագիր պ. Փորթուգալեանի միջնորդութեամբ։

Ես մինչեւ այժմ յիշում եմ այդ ծանր դէպքը։ Մի առաւօտ Գամառ-Քաթիպան մնում է իմ սենեակը, երեսը գունատ, ձեռքերը դողում են. նա մեկնում է ինձ մի ծրար։ Մէջը գեղեցիկ խօսքեր եւ... եւ 5 ֆունտ ստերլինգ, որը կարժէր այն ժամանակ 50 բուբլի...

Մթթէ դա մուրացկի դաբախ չէր։

Իսկ մեր հրաւէրին, մեր կոչին, երբ բանաստեղծը քաղցած էր եւ ծարաւ, ինչ չափով օգնեց նրա պիրած «ամբողջ ազգը»։

Չեմ յիշում լաւ, մոռացել եմ, բայց կարծեմ միայն երկու հազար բուբլի փող մենք ստացանք եւ յանձնեցինք նրան։

Մուրացկի դաբախ... մուրացկի դաբախ...

Եւ մենք դեռ պնդում ենք, որ ամբողջ ազգը այսօր պարծենում է Ռ. Պատկանեանով։

Դա սուտ է, իսկ եթէ ո՞չ, աւելի վատ,—գրոչ չարժէ մեր ամբողջ ազգի պարծենալը...

Շատ փոքր բան արեց Նոր-Նախիջեւանը Գամառ-Քաթիպայի համար, բայց եւ այնպէս արեց եւ կարողացաւ անել, որովհետեւ Նոր-Նախիջեւանի աղաների թագաւորութեան ժամանակները անդարձ անցել են, մինչդեռ Թիֆ-

լիսում, Բաքւում, Երեւանում, Գանձակում եւ ուրիշ հայաբնակ տեղերում աղանները հրզօր են։

Եւ դուրս է գալիս, որ մեր պարծանքը բառեր են, բառեր եւ բառեր, իսկ հետեւանքը մուրացկի, լոկ մուրացկի դաբաս։

Չէ, գրօշ չարժէ ձեր պարծենալը...

Գր. Զալխուչեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Պէպօ», կոմեդիա երեք արարուածով, Գ. Սունդուկեանցի. երկրորդ տպագրութիւն, Թիֆլիս, 1901.

Ներկայ թուականի ապրիլի 30-ին լրացաւ երեսուն տարի այն օրից, երբ առաջին անգամ խաղացվեց Թիֆլիսում Գ. Սունդուկեանցի «Պէպօ» կոմեդիան։ Զը նայելով, որ «Պէպօն» եղել է ամենաժողովրդական թատրոնական գրուածքը այդ երեսնամեայ շրջանում եւ նա դեռ 1876-ին տպագրութեամբ լոյս է ընծայվել, սակայն նրա առաջին հրատարակութիւնը այնքան դանդաղ տարածվեց հայ հասարակութեան մէջ, որ միայն այսօր, 25 տարի անցնելուց յետոյ, տաղանդաւոր հեղինակի համար հնարաւորութիւն է ներկայանում երկրորդ տպագրութիւնը կատարել։ Այդ հանգամանքը, անշուշտ, շատ էլ պատիւ չէ բերում հայ հասարակութեան թատրոնասէր եւ ընթերցասէր ճաշակին։

Երկրորդ տպագրութիւնս առիթ է տուել բազմաչխատ դրամատուրգին մացնել կոմեդիայի մէջ մի քանի փոփոխութիւններ, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ էին եւ մի քանիսը բղխում են էսթետիկական պահանջից։ Այսպէս, օրինակ, երկրորդ արարուածի մէջ, երրորդ տեսիլում, Էփեմիան ծառայ Սամսոնին ասում է՝ «դուն էլ էնէնց հաքի, վուր դիփուանց աճկիրը քոռանայ». այս պարբերութիւնը կարող էր այն կարծիքն առաջ բերել, թէ Էփէմիայի եւ Սամսոնի մէջ այլ յարաբերութիւններ կան, քան ինչ որ կարող է լինել տիրուհու եւ ծառայի մէջ, մինչ պարզ է, որ Էփեմիան, դրդված անապարծութիւնից, կամենում է, որ ամենքը տեսնեն, թէ իր ծառան նոյն իսկ ամենից գեղեցիկն է հագնված. դրա համար հեղինակը երկրորդ տպագրութեան մէջ մացրել է այս փոփոխութիւնը. «դուն էլ էնէնց հաքի, վուր դիփուանց աճկը վրէն մնայ»։

Երրորդ արարուածում մի հակասութիւն շատ աչքի էր ընկնում. Շուշանը շատ լաւ գիտէ, որ իր ամուսնու մահվան ժամանակ Գիքօն շարունակ նրա մօտ է եղել, որ Գիքօն եղել է նրա վերջին պատուէրները եւ բերանացի կտակ լսողը, հետեւաբար, անկարելի էր, որ Պէպօի հայրը ոչ մի խօսք ասած չը լիներ Գիքօին Արութինի մուրհակի մասին. բայց մենք տեսնում ենք, որ Շուշանը ոչ մի անգամ ոչ մի հարցմունք չէ անում Գիքօին այդ մասին, ինչ որ շատ անբնական է թւում։ Այժմ հեղինակը լրացրել է այդ աչքի ընկնող պակասը եւ չորրորդ տեսիլում Շուշանի բերանում դրել է այս խօսքերը. «Ախար էն զաղա վուր հարց ու փուրց էինք անում, մէ օր վուչնց չկորվեցար, օխնած հոքի...։ Փարազի ասինք անդէրձը կապում էր քիզ էն գլխէն, իժում էլ է մէ խօսկ ժայինց կօսէիր, է...»։ Բացի այս երկու գլխաւոր փոփոխութիւններից կան եւ մի քանի աննշան փոփոխութիւններ։

Մենք աւելորդ ենք համարում յանձնարարել հասարակութեան «Պէպօն». ինքը հասարակութիւնը արդէն արտայայտել է իր ջերմ համակրութիւնը ծերունի հեղինակին նրա ներկայացման երեսնամեակի առիթով, բայց մենք կը ցանկանայինք, որ «Պէպօի» երկրորդ հրատարակութիւնը լայն կերպով տարածվէր, որ հասարակութիւնը, օգնելով «Պէպօի» տարածման, միջոց տար տաղանդաւոր հեղինակին ոչ միայն «Պէպօի» երրորդ հրատարակութիւնը կատարել, այլ եւ իր միւս թատրոնական գրուածները երկրորդ տպագրութեամբ հրատարակել։ Այնպիսի հեղինակներին, ինչպէս Գ. Սունդուկեանցն է, հասարակութիւնը ոչ միայն բարոյական, այլ եւ նիւթական աջակցութիւն պէտք է ցոյց տայ, իսկ այդ աջակցութեան ամենալաւ ձեւը՝ նրա թատրոնական գրուածների լայն տարածումն է ժողովրդի մէջ։ «Պէպօի» նոր հրատարակութեան գինը 50 կոպէկ է։

Հ. Ա.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

„Կեանքի արժէքը", դրամա 4 գործ. Նեմիրովիչ-Դանչենկոյի

Ուրբաթ, հոկտեմբերի 26-ին, հայ դրամատիքական խումբը Թիֆլիսի արտիստական թատրոնում տուեց Նեմիրովիչ-Դանչենկոյի «Կեանքի արժէքը» դրաման չորս գործողութեամբ։ Այդ պիէսը նոր է թարգմանված եւ լաւ ընդունելութիւն է գտել Բաքւում եւ Թիֆլիսում շնորհիւ իր մէջ պարունակող կենսական գծերի։

Իբսէն իր երիտասարդ հասակի ստեղծագործութիւններից մէկի մէջ մի հերոսի բերանով այն միտքն է յայտնում, որ «ամուսնութիւնը սիրոյ գերեզմանն է»։ Բայց իսկական Իբսէնը հեռու մնաց այս դաւանանքից եւ իր յետագայ դրամաների մի ամբողջ շարքով ապացուցեց մի այլ ճշմարտութիւն. այդ այն է, որ սիրոյ, հոգեկան կապի բացակայութիւնը ամուսնութեան, հետեւաբար եւ բուն կեանքի գերեզմանն է. «Սիրոյ կատակերգութիւնը», «Նորա», «Հէդդա Գաբլէր», «Բօսմէրսհօլմ», «Ծովի տիկինը» եւ այլն հատարեա ամբողջովին այս ճշմարտութեան շուրջն են պտտում։

Դանչենկոյի «Կեանքի արժէքը» ահա մասաւորապէս այս նոյն ճշմարտութեան դաղափարն է ամփոփում եւ Իբսէնի «Ծովի տիկնոջ» հետ երբեմն նմանողութեան աչքի ընկնող հեռքեր է ցոյց տալիս. միայն այն տարբերութեամբ, ի հարկէ, որ ռուս դրամատուրգի արծարծած պրոբլէմներն այնքան խորիմաստ չեն եւ որ նրա դրաման զուրկ է այն սիմբոլիքական, խորհրդաւոր գծերից, որոնցով հիւսված են սովորաբար Նորվէգացի հռչակաւոր դրամատուրգի ստեղծագործութիւնները։

Դանիէլ Տիմոֆէիչ հարուստ գործարանատէրը իր կնոջ մահվանից յետոյ ամուսնանում է երկրորդ անգամ. նոր ամուսինը հատարակ դասակարգից է, աղքատ ծնողների զաւակ, բայց որ գլխաւորն է 20 տարով երիտասարդ՝ Դանիէլ Տիմոֆէիչից։ Աննա Վիկտորովնան իսկապէս ծախում է իրան. նա կապվում է Դէմուրինի հետ՝ առանց նրան սիրելու, առանց սրտակցութեան, միմիայն գոյութեան կռուի լուծը թեթեւացնելու համար։ Դէմուրին սակայն ազատ չէ յանցանքից. նա էլ է մեղապարտ. հոգեկան բարձր թռիչքների համար նա թեւազուրկ է, փոխադարձ սիրոյ, զգացմունքների ներդաշնակութեան պահանջ նա չէ զգում. նա ինքնագոհ բաւականութեամբ ամբողջ 5 տարի ապրում է իր կնոջ հետ, որովհետեւ այս վերջինի մէջ նա ըստ երեւոյթին միայն զգայականն է որոնում։ Բայց Աննայի սիրտը պապակում է զգացմունքի, իսկական սիրոյ ծարաւով. նա ամուսնական առագաստից դուրս գտել է մի բարեկամ, մի հոգեկից եւ կապվել է նրա հետ փոխադարձ սիրով. դա իր ամուսնու ատորադրեալներից մէկն է՝ երիտասարդ Մօրսկոյը, որ ծառայում է իրանց գործարանում։ Դանիէլ Տիմոֆէիչի սրտի դատարկութիւնը փոխարինող այս սէրը մշտապէս չէ կարող բաւականացնել Աննային. նրա հոգեկան հանգստութիւնը հեղհեղէ վրդովվում է. նա ըմբոնում է մի կողմից ամուսնական անհաւատարմութեան սոսկալի արատը, միւս կողմից իր եւ Դէմուրինի մէջ տիրող սառնութեան ծանր ճնշումը։ Այս հոգեկան փոխակերպման հետեւանքն այն է լինում, որ Մօրսկոյը յուսահատված՝ ինքնասպանութիւն է գործում։ Բայց այս ինքնասպանութիւնը նշանակալից է ոչ միայն իբրեւ «հետեւանք», այլ եւ իբրեւ «պատճառ»։ Տարաբաղդ երիտասարդի ողբերգական մահը բնականաբար ծանր յուզմունքների պիտի ենթարկէր Աննային։ Կրկնակի մեղապարտութեան զգացմունքը, գիտակցութիւնը այժմ աւելի խոր կերպով է տանջում նրան. այնպէս որ փոթորիկն այլ եւս անխուսափելի էր։ Դէմուրին տեղեկանում է իր կնոջ անհաւատարմութեան մասին. վերջինս իր պարզ, աներկիւղ խոստովանութեան հետ միասին՝ քրքրում է եւ իր սրտի վերքերի ամբողջ կոյտը. ոչ միայն իր սեփական ծանր մեղքն է ճանաչում, այլ եւ պատճառաբանում է իր գործած մեղքը, այսինքն ամուսնու յանցանքն է երեսով տալիս։ Համաձայն իր սիրահարի վերջին ցանկութեան, գուցէ եւ կամովին, Աննան ձգտում է նոյնպէս ինքնասպանութիւն գործել։ Այս միտքը Դէմուրինին շանթահար է անում։ Չէ որ դրանով շրջապատողները, հասարակութիւնը կը տեղեկանան իր ընտանեկան յարկում տեղի ունեցած այս արատի մասին—ահա ինչն է տանջում ձեւականութեան, կօնվէնցիօնէլ կարգերի ստրուկին։ Այս տարատիպ մի կողմից իր սեփական յանցանքի գիտակցութիւնը միւս կողմից հարկադրում են Դէմուրինին մեղմանալ, դիջող դառնալ։ Վերջինս իր մեղապարտութեան գիտակցութեամբ մասամբ հանգստացնում է Աննային, որ թողնում է ինքնասպանութեան միտքը եւ շարունակում է դարձեալ բանակցել Դէմուրինի հետ։

Դրամայի միւս դէմքերից աչքի են ընկնում Դէմուրինի քոյրը՝ Կլավդիա Տիմոֆէեվնան եւ Դէմուրինների մայրը՝ Աւդոտիա Ստեպանօվնա, մասամբ նաեւ պրոֆէսօր Սօլօնչակով։ Կլավդիա Տիմոֆէեվնան պատկանում է կանացի այսպէս կոչված նոր, modern սերունդին. նա սովորել է փիլիսոփայութիւն եւ յաճախ սիրում է փիլիսոփայել. բայց նա իր աշխարհահայեացքը գրադարանների փոշու տակն է մշակել եւ ոչ թէ կեանքի եռուն, կենդանի հոսանքներում։ Դանչենկօն բաւականին շօշափելի գծերով, մանաւանդ մի սուր, երբեմն խայթող հեգնութեամբ փորձում է ցոյց տալ, թէ ինչպէս կանացի որոշ բնաւորութիւններ մասաւոր բարձր կրթութեամբն անգամ անյղկելի են մնում, ինչպէս սեռական մի քանի առանձնայատկութիւններ անջինջ կերպով պահպանում են իրանց դրոշմը։ Ինչ վերաբերում է Կլավդիա Տիմոֆէեվնային՝ մենք տեսնում ենք, որքան նա չարաճճի է, նոյնքան խանդոտ, որքան «փիլիսոփայ»՝ նոյնքան կոկէտ. այո, փիլիսոփայութիւնը մինչեւ իսկ նա զէնք է դարձնում իր կոկէտութեան։

Դրաման՝ չը նայելով իր հետաքրքրական գլխաւոր թեմային՝ հիւսուածքի կողմից ընդհանրապէս այնքան էլ ճարտարարուեստ չէ. համարեա սկզբից մինչեւ վերջ մի քարտէզական, հրապարակախօսական տօն է հնչում ունկնդրի ականջին—մի գիծ, որ առհատարակ ռուսական արուեստի բնորոշ յատկութիւններից մէկն է կազմում։

Գալով խաղին՝ պէտք է խոստովանենք, որ մենք ներկայ սեզօնում դեռ այսքան գոհ կերպով չէինք հեռացել հայոց թատրոնից. ուրախալին այն է, որ բացի գլխաւոր դերակատարներից, ամբողջութիւնն էլ գովելի էր։ Տ. Սիրանոյշի Աննա Վիկտորովնան, անկասկած, ներկայացման աջողութեան պատկն է կազմում։ Նրա խաղը մտածված, շատ նուրբ կերպով ըմբռնված եւ մի եւ նոյն ժամանակ յուզիչ ու վերին աստիճանի լարող էր։ Նաժակի ընթերցանութեան տեսարանը, մեր կարծիքով, ամենայաջողն էր. միայն այդ տեսարանի վերջին րոպէն մի քիչ չափազանցացրած էր՝ հիստէրիկի նախանշանները շատ ուժգին էին եւ նոյն իսկ տարօրինակ. բժշկական տատողութիւններ տալու յաւակնութիւնից մենք միանգամայն հեռու ենք, բայց խոստովանում ենք, որ մեզ այնպէս թւաց, թէ այդ նախանշաններին պիտի յաջորդէ աւելի շուտ էպիլէպսի քան հիստէրիկա։ Տիկնոջ արտասանութիւնը թէեւ յատակ էր, բայց երբեմն շատ մեղմ։

Տիկին Մայսուրեանցի Կլավդիա Տիմոֆէեվնան մեզ վրա նոյնպէս լաւ տպաւորութիւն թողեց. չենք կարող պնդել, որովհետեւ միայն երկրորդ անգամն է, որ տեսնում ենք տիկնոջ խաղը, բայց մեզ թւում է, որ նա միանգամայն իր ամպլուայում էր։ Իր դերի կոկէտ մասը նա շատ բնական եւ կենդանի կերպով տարաւ. այն ինչ նախանձի եւ խանդի բոպէներում այնքան աջող չէր։ Պարոն Պետրոսեանի Դէմուրին լաւ էր. պարոնի խաղը տպաւորիչ էր մանաւանդ իր կնոջ անհաւատարմութեան լուրն առնելու առաջին բոպէներին։ Տիկին Փառանձեմը Աւդոտիա Ստեպանօվնայի դերը բաւարար աջողութեամբ կատարեց։ Աւդոտիա Ստեպանօվնան բնաւորութեամբ բաւական չար,—մի չարութիւն ոսկայն, որ աւելի շուտ ստացական է, ոչ ինքնաբուղխ, պառաւական հատակին յատուկ—հնամոլ եւ աւանդապահ հայացքների տէր մի կին է։ Այս աւանդապահ ոգին առհատարակ ամենից շատ պէտք է շեշտվէր. բայց այդ շեշտը պէտք է լինէր լուրջ, համոզված. մեզ թւում էր, որ տիկինը փոխանակ այս ձեւով ներկայացնելու այդ պառաւ մոր տիպը՝ փորձում էր աւելի շուտ նոյն պառաւին ծաղրական գոյներով պատկերացնել։ Տիկին Աւետեանը Վարեայի փոքրիկ դերում շատ լաւ էր։ Վատ չէր նաեւ օր. Գուլազեանը՝ իբրեւ Սաշա։ Միւս դերակատարներից լաւ էին պ.պ. Աղայեան՝ իբրեւ դործարանի կառավարիչ եւ Ալիխանեան՝ իբրեւ Մօրսկոյ։ Գ. Ստեփանեանի պրոֆէսօր Սօլօնչակով նոյնպէս աջող կարելի էր համարել, եթէ միայն պարոնի արտասանութիւնը միշտ միօրինակ չը լինէր։

Վ. Նալբանդեան

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ, հոկտեմբերի 26-ին, ցերեկվայ ժամի 1-ին կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին Բաթումից վերադարձաւ Թիֆլիս։ Նրա հետ միասին Թիֆլիս վերադարձաւ նաեւ կառավարչապետի դիւանատան դիրեկտոր գնդապետ Տրոֆիմով։

Այսօր, հոկտեմբերի 28-ին, Անդրկասպեան երկրից Բաքու կը հասնի զինուորական մինիստր գեներալ Կուրոպատկին. նրան դիմաւորելու համար ուրբաթ, հոկտեմբերի 26-ին, Թիֆլիսից ճանապարհ ընկաւ Բաքու կովկասեան զինուորական շրջանի շտաբի կառավարիչ գեներալ Բելեւսկի եւ զինուորական հաղորդակցութիւնների կառավարիչ գեներալ Էբէլով։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօր, կիրակի, հոկտեմբերի 28-ին, երեկոյեան 7 ժամին, տեղի կունենայ մի լրացուցիչ ժողով կաթնատնտեսութեան եւ անասնապահութեան հարցերի քննութեան վերաբերմամբ։ Զեկուցումներ կը կարդան Տիմոֆէեվ, Կանցելմախէր, Անտրոպով, Բաշբէուք-Մելիքով եւ Բալանթար։ Նիստին կարող են ներկայ լինել եւ միճաբանութիւններին մասնակցել ցանկացողները։ Նիստը կը լինի Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում։

—

Հողագործական ժողովում Ս. Զաւարեան կարդաց մի զեկուցում ոռոգման կարեւորութեան մասին Երեւանի նահանգում եւ առաջարկեց մի քանի միջոցներ ոռոգման գործը ընդարձակելու եւ փութացնելու համար։ Ե. Կամենեցկիյ կարդաց զեկուցում գիւղատնտեսական խորհրդակցութիւնների մասին գաւառներում։ Զեկուցումները առաջ բերին հետաքրքիր վիճաբանութիւններ։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ այս տարվայ յունվարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 16-ը Կուր գետում խեղդվելուց ազատված են 30 հոգի, որոնցից 23-ին ազատել են ջրահեղձութիւնից ազատող կայսերական ընկերութեան հիմնարկութիւններին պատկանող անձինք, իսկ 7-ին—կողմնակի անձինք։ Խեղդվել են նոյն ժամանակի ընթացքում 15 հոգի։

—

Թիֆլիսի հրէայ դերձակները որոշել էին կազմել փոխադարձ-օգնութեան ընկերութիւն եւ մշակելով ընկերութեան կանոնադրութիւնը ներկայացրել էին Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարին։ Տեղական լրագիրների ասելով՝ վերջինը վերադարձրել է կանոնադրութիւնը այս գործը ձեռնարկողներին եւ յայտնել, թէ դեռ եւս պարզված չէ այն հարցը, թէ հրէայ արհեստաւորները ունեն իրաւունք ապրելու Թիֆլիսում։

—

Մոսկվայի Լազարեան ճեմարանի հիմնադիր կոմս Յովհաննէս Լազարեանի մահվան հարիւրամեակի առիթով Լազարեան ճեմարանի վարչութիւնը հոկտեմբերի 24-ին հոգեհանդիստ է կատարել Մոսկվայի հայոց Վերացման Խաչի եւ ս. Նիկողայոսի եկեղեցիներում եւ ապա Լազարեան ճեմարանի շինութեան մէջ տեղի է ունեցել տարեկան հանդիսաւոր ակտ։

—

Մեզ հաղորդում են, որ վաղը, երկուշաբթի օր, հոկտեմբերի 29-ին, տեղի կունենայ հողագործական ժողովի վերջին նիստը, որով կը վերջանան Թիֆլիսում գումարված գիւղատնտեսական ժողովների պարապմունքները։

—

Կովկասեան ցուցահանդէսի թատրոնական խումբը տեղափոխվեց վրաց թատրոնի բեմի վրա։ Հոկտեմբերի 26-ին եւ 28-ին խումբը տուեց իր մշտական ներկայացումները, որոնք գրաւել էին բաւական բազմութիւն։ Այդ ներկայացումները կը շարունակվեն դարձեալ չորս օր, մինչեւ նոյեմբերի 1-ը, որից յետոյ կը վերջանայ ցուցահանդէսի վարչութեան պայմանաժամը այդ խմբի հետ։

—

Կարսի երկաթուղու Շահալի կայարանից հաղորդում են, թէ հոկտեմբերի 25-ին, երեկոյեան մօտ 9 ժամին, այդ կայարանից ոչ հեռու, երկաթուղու գծի վրա չրջակայ ժայռերից թափվեցին ահագին քանակութեամբ քարեր եւ ծածկեցին գիծը բաւականաչափ մեծ տարածութեամբ։ Փլուածքից յետոյ այդ տեղին մօտեցաւ զինուորական գնացքը եւ խորտակվեց։ Երեք վագոն փչրվեցին բոլորովին, իսկ հինգ վագոն, որոնք բեռնված էին զինուորական ծանրոցքներով, վնասվեցին։ Բարեբախտաբար զինուորներից վնասվեց միայն մի հոգի։ Ճանապարհը երկաթուղու այդ տեղում երեք օր, մինչեւ հոկտեմբերի 27-ը, ծածկված էր քարերով եւ խորտակված վագոնների կտորներով։ Ճանապարհորդները անցնում էին այդ տեղից՝ տեղափոխվելով մի գնացքից միւսը։

—

Դերասան պ. Վրոյը այս ամառ գնալով Հաղբատ եւ Սանահին վանքերը, լուսանկարով վերցրել է թէ այդ վանքերի եւ թէ նրանց շրջակաների տեսարանները եւ պատրաստել է մի ամբողջ ժողովածու, որին տուել է «Գուգարաց Աշխարհ» անունը։ Լուսանկարները պատրաստված են ոտէօրսկոպի համար։ Պարոնը մեզ ցոյց տուեց այդ ժողովածուն եւ մենք կարող ենք վկայել, որ պատկերները շատ նուրբ ու գեղեցիկ են դուրս եկել, յիշեցնում են Քիւրքճեանի՝ Անիի պատկերների ժողովածուն։ Պ. Վրոյրի լուսանկարները այնքան նուրբ են, որ մի քանի տեղ կարդացվում են նոյն իսկ քարերի վրա քանդակած արձանագրութիւնները։ Խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այդ գեղեցիկ ժողովածուն, որը ոչ միայն մեր հնութիւններն է պատկերացնում, այլ եւ երկրի տեսարանները։ Դրանով հասարակութիւնը խրախուսած կը լինի պարոնին շարունակելու իր ձեռնարկութիւնը։ Պէտք է նշենք մանաւանդ այն, որ ժողովածուի գինը ժամանակի է—6 ր. 50 կոպէկ 24 պատկերի համար։ Ամբողջ ժողովածուն բաղկացած է 48 պատկերներից եւ միասին արժէ 11 ռուբլի։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, թէ այնտեղ հոկտեմբերի 22-ին տեղի է ունեցել այն ընկերութեան նոր շինութեան օրհնութիւնը, որի նպատակն է կերթել օտար դաւանութիւններին պատկանող երեխաներին։ Ընկերութիւնը հիմնված է ութսուն տարի առաջ, Այէքսանդր I կայսրի ժամանակ։ Նոր շինութեան մէջ կը գտնուվի ընկերութեան ուսումնարանը, ուր կընդունվին բացառապէս ռուսահպատակ այլադաւանների երեխաները։ Ուսումնարանի դասընթացքը վեցամեայ է. նրա նպատակն է հիմնաւոր գիտութիւն տալ երեխաներին ռուսաց լեզուից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական մամուլը ողջունում է Ֆրանսիական նաւատորմի ուղարկվելը դէպի Թիւրքական ջրերը։ Բացառութիւն չեն կազմում այս դէպքում նոյն իսկ այնպիսի չափաւոր լրագիրներ, ինչպէս են «Temps» եւ «Journal des Débats»։ «Temps» ասում է. «Ֆրանսիան շատ երկար համբերեց։ Եռանդի պակասութիւնը, որ նա ցոյց տուեց հայկական կոտորածի ժամանակ, չափազանց մեծ հարուած հասցրեց նրա վարկին եւ անուանը Արեւելքում։ Ֆրանսիա խօսքը կորցրեց բոլորովին իր նշանակութիւնը եւ կշիռը Կ. Պոլսում։ Թիւրքերը դաղարեցին հաւատալ Ֆրանսիայի սպառնալիքներին։ Ժամանակ է, որ այժմ մենք ցոյց տանք Ֆրանսիայի զօրութիւնը եւ վերականգնենք նրա վարկը։ Աւստրիան, Հիւսիսային-Ամերիկան եւ Իտալիան նոյնատեսակ դէպքերում մի քանի խրատական օրինակներ են տուել»։ «Journal des Débats» գրում է. «Ոչ, ոքի համար կասկածելի չէ կարող լինել,—ոչ Կ. Պոլսում եւ ոչ եւրոպական մի ուրիշ մայրաքաղաքում,—որ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի մէջ գոյութիւն ունի կատարեալ համաձայնութիւն ինչպէս այս հարցի, այնպէս էլ միւս բոլոր հարցերի վերաբերմամբ։ Սրան ապացոյց կարելի է համարել ռուսաց կառավարութեան վարմունքը այն բանի մէջ, որ երբ Թիւրքաց կառավարութիւնը դիմեց նրան եւ խնդրեց միջնորդի դեր յանձն առնել Ֆրանս-Թիւրքական ընդհարման գործում, ռուսական կառավարութիւնը բաւականացաւ միայն մի պատասխանով, թէ նա համարում է Ֆրանսիական պահանջները արդարացի»։ Նացիոնալիստական մամուլն եւս հաւանութիւն է տալիս Վալդէկ-Ռուսսոյի մինիստրութեան վճռական քայլին։ «Gaulois» յայտնում է, թէ այժմ ժամանակ չէ քննադատելու կառավարութիւնը եւ աւելացնում է. «Մենք յարգանքով ողջունում ենք մեր ծովային զինուորներին, որոնք կը տանեն Ֆրանսիական նաւատորմը դէպի Դարդանէլի ջրերը»։ Լրագիրների ասելով, Ֆրանսիական զինուորական ոյժերը, որոնք ուղարկված են Թիւրքիա, բաղկացած են 2,500 զինուորներից եւ 125 օֆիցերներից, 12 մեծ, 38 միջակ եւ 110 փոքր թնդանօթներով։

—«Berliner Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակցի ասելով, սուլթանը մտադիր է ուղարկել Պետերբուրգ մի առանձին պաշտօնական պատգամաւորութիւն՝ պարզելու համար թէ հայկական եւ թէ մակեդոնական անկարգութիւններին վերաբերեալ հարցերը, ինչպէս նաեւ Կրէտէի եւ Յունաստանի միացման հարցը։ Թղթակցի կարծիքով, իսկապէս վերջին հարցն է լինելու ուղարկվելիք պատգամաւորութեան հոգսի առարկան։

—Հոկտեմբերի 18-ին Ջոն Մորլէյ Աբրոտում (Շոտլանդիայում) արտասանեց քաղաքական մի ընդարձակ ճառ, որ նուիրված էր հարաւ-ափրիկեան պատերազմին։ «Այժմեան պատերազմը,—ասաց նա,—որ չարունակվում է ահագին երկու տարուց աւելի, կարող է վերջանալ միայն մի ամբողջ ժողովրդի ոչնչացումով, մի ժողովրդի, որ պաշտպանում է իր հայրենի երկիրը։ Բայց այդպիսի պատերազմը հրէշաւոր անարդարութիւն է։ Անգլիական կառավարութիւնը, ակներեւ է, կորցրել է գլուխը եւ ելք է որոնում՝ դիմելով յուսահատական միջոցներին։ Մինչ բրիտանական ժողովուրդը, տեսնելով իր ֆինանսների քայքայումը, այն բոլոր զոհերը, որ պահանջում եւ տանում է այդ պատերազմը եւ իր դիպլոմատիայի գործունէութեան թուլութիւնը Եւրոպայում, կը մնայ ձեռքերը ծալած եւ զինուորներին կը թողնէ վճռել հարաւ-ափրիկեան հարցը։ Բայց հարցի լուծումը յանձնել զինուորականներին նշանակում է յայտնել, թէ Անգլիայում չը կան այլ եւս պետական ընդունակ գործիչներ։ Եթէ այժմեան կառավարութիւնը մի ուրիշ միջոց, բացի տերրօրից, չէ գտնում անվերջ արիւնհեղութեանը վերջ դնելու համար, Էդուարդ VII, շատ կարելի է, ստիպված կը լինի չուտով որոնել ուրիշ մինիստրների, որոնք աւելի համապատասխանէին այն պահանջներին, որ անում է կառավարութիւնից իրերի այժմեան դժուար եւ խճճված դրութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Այս տարվայ մարտ ամսին մի օր պատահեցի Գիւղատնտեսական ընկերութեան քարտուղարին։

—Ինչու, հարցրի նրանից, ձեր ընկերութիւնը նիստեր չէ անում։

—Նոր զեկուցումներ, նոր հարցեր չը կան, պատասխանեց նա։

—Անկարելի է, որ չը լինեն, զարմացած նկատեցի ես։

—Իրողութիւնը այդ է, կրկնեց նա անվրդով կերպով։

Անցաւ մի քանի ժամանակ։ Մի օր լրագիրներում կարդացի, որ նշանակված է այդ ընկերութեան նիստը։

Դժբաղդաբար նոյն այդ օրը ես հրաւիրված էի եւ մի յանձնաժողովի նիստի։

Ի՞նչ պէտք է անէի։ Թէ յանձնաժողովի եւ թէ Գիւղատնտեսական ընկերութեան նիստերը նշանակված էին մի եւ նոյն ժամերին. երկուսի սկիզբն էլ 7½ ժամն էր։

Բայց յանձնաժողովում միայն մի կէս ժամվայ կամ շատ շատ մի ժամվայ գործ կար։ Ուստի ես վճռեցի յանձնաժողովում վերջացնել գործերս եւ յետոյ գնալ Գիւղատնտեսական ընկերութեան նիստը։

Այդպէս էլ արի։

Դուրս գալով յանձնաժողովի նիստից կառք վերցրի եւ շտապով ուղեւորվեցի դէպի ընկերութեան տունը։

Ներս եմ մտնում եւ ինչ եմ տեսնում։ Շատ քիչ մարդ կայ։

—Նիստը արդեօք վերջացա՞, թէ չէ կայացել ամենեւին, հարցրի ես ծառաներից։

—Չէ, հաւաքվում են, գալիս են, չուտով կը սկսվի նիստը։

—Այդքան ո՞ւշ, մրմնջացի ես, վերարկուս հանելով։

—Մեզանում միշտ այսպէս է լինում, վրա բերեց ծառան։

—

Ներս մտայ։

Մի քանի մարդ ման էին գալիս դահլիճում եւ խօսակցում. մէկը ինչ որ նամակներ էր կարդում եւ ծոցի գրպանը դնում, մի քանիսը ծոյլ-ծոյլ թերթում էին ընթերցարանի սեղանի վրա դրած մասնագիտական թերթերը։

—Ինչու՞ չեն սկսում նիստը, հարցրի ես մի բարձրահասակ պարոնից, որ նայում էր պատի վրա կախած մի աղիւսակի։

—Երեւի չուտով կը սկսեն, պատասխանեց նա մեծ հանգստութեամբ. նախագահը այստեղ է։

Վերջապէս ժամի 10-ին սկսվեց նիստը։

Մի կէս ժամ կարդում եւ խօսում էին վարչական մանր մունր հարցերի մասին։

—Փոքր ինչ բարձր, խնդրեց սեղանի ծայրին նստած մի մարդ։

Խօսողները փոքր ինչ ձայները բարձրացրին եւ յետոյ դարձեալ ցածացրին։

—Խօսք եմ խնդրում, աղաղակեց մի երիտասարդ։

—Խօսքը ձերն է, դիմեց նրան նախագահը։

Երիտասարդը սկսեց շատ սաստիկ յուզված եւ խօսեց այգեգործական դպրոցի մասին։

Միւսները միջամտեցին եւ նկատեցին, որ յարուցած հարցը արդէն վաղուց վճռվել պըրծել է։

Ժամի 11-ին սկսվեց յայտարարված զեկուցումի ընթերցումը։

Զեկուցումը հետաքրքրական էր եւ վերաբերում էր կենսական երեւոյթների։

Բայց յոգնած էին բոլորը։

Ուստի վճռեցին զեկուցման քննութիւնը յետաձգել միւս նիստի։

Ես հետեւում էի մի քանի շաբաթ լրագիրներին, որ իմանամ, թէ երբ է լինելու հետեւեալ նիստը եւ զեկուցման քննութիւնը։

Բայց չը տեսայ այդ մասին յայտարարութիւն։

Եղան թէ չեղան նիստը եւ քննութիւնը՝ չը գիտեմ. ես այլ եւս չէի հետեւում այդ բանին։

—

Կարդացի լրագիրներում, որ ցուցահանդէսի առիթով հրաւիրված են ժողովներ։

Կարդացի եւ մի քանի զեկուցումների մասին հաշիւներ։

Պէտք է գնամ եւ տեսնեմ, վճռեցի ես։

Երեկոյեան ժամի 7-ին, երբ անցնում էի Գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մօտով, մտածեցի, որ լաւ կը լինի մտնեմ եւ հարցնեմ, թէ երբ են սկսվում նիստերը։

Եւ լաւ գիտէի, որ մի կամ երկու ժամից յետոյ պէտք է նիստ սկսվէր, բայց եւ այնպէս աւելի լաւ էր ճիշտ կերպով տեղեկանալ։

Ներս եմ մտնում եւ իմ աչքերին չեմ հաւատում։

Զորս կողմը վերարկուներ, ձեռափայտեր, հովանոցներ, կրկնակոշիկներ։

—Սրանք ովքե՞ր են այստեղ, չուարած հարցրի ես ծառայից։

—Ժողովի նիստ է, պատասխանեց ծառան կտրուկ կերպով։

—Արդէն հաւաքվե՞լ են, հարցրի ես։

—Ինչպէս տեսնում էք։

—Իսկ նիստը ե՞րբ կը սկսվի։

—Արդէն սկսել են. հէնց այս րոպէին սկսեցին, համեցէք ներս։

—Այսպէս վնո՞ղ, զարմացած բացագանչեցի ես։

—Սրանք վաղ են սկսում, գլուխը թափ տալով նկատեց ծառան։

Հանեցի վերարկուս եւ ներս մտայ։

Դահլիճը լիքն էր բազմութեամբ։ Ազատ աթոռներ շատ քիչ էին մնացել։

Ժողովականների մէջ տիրում էր աշխոյժ տրամադրութիւն։

Երբ ես մտայ, կարդացվում էր մի պարոնի զեկուցումը։

Նախագահը իր կողմից արեց մի երկու նկատողութիւն եւ խօսք տուեց ժողովականներին։

Սկսվեց հետաքրքրական եւ խելացի վիճաբանութիւն։ Վիճողների մէջ կային գաւառացիներ, գործնական կեանքի ներկայացուցիչներ, փորձված եւ հմուտ գիւղատնտեսներ։

Ես իմ այդ դիտողութիւնը յայտնեցի հարեւանիս։

—Այո, ներկայ ժողովները ցոյց տուին, որ կան բանիմաց մարդիկ մեր երկրի զանազան տեղերում։

—Իսկ զեկուցումներ արդեօք կա՞ն բաւականաչափ, հետաքրքրվեցի ես։

—Այո, շատ են, ոչ պակաս քան յիսուն զեկուցում, պատասխանեց նա։

—Յիսուն զեկուցո՞ւմ, բացագանչեցի ես։

Ես չէի մոռացել ընկերութեան քարտուղարի խօսքերը, որ նա ինձ ասել էր մարտ ամսին զեկուցումների բացակայութեան մասին։

—Յիսունից աւելի է, ես ասացի մօտաւորապէս, նկատեց հարեւանս։

—Բայց ինչպէ՞ս կարող էք այդքան զեկուցումներ կարդալ, հետաքրքրվեցի ես։

—Ստիպված են կրճատել եւ գլխաւոր կէտերի վրա կանգ առնել, բացատրեց նա։

—

Մարդ էլ շատ կայ, զեկուցում էլ շատ կայ։

Պէտք է ընդունակութիւն ունենալ այդ մարդկանց գրաւելու եւ զեկուցումները հանդէս բերելու։

Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճը ստացել էր մի թարմացնող, կեանք ներշնչող տրամադրութիւն։

Ես էլ ցանկանում էի մասնակցել վիճաբանութիւններին եւ զրոյցներին։ Եւ պահանջ էի զգում խօսել եմ գիտեցած կարիքների մասին եւ իմ նկատողութիւնները ու կարծիքները յայտնել քննվող հարցերի մասին։

Ճառախօսների մէջ կային եւ ճոռոմաբաններ ու իմաստակներ, որոնք թոյլ էին տալիս աւելորդաբանութիւններ եւ դատարկաբանութիւններ։

Բայց ընդհանուր ոգին համակրելի էր, ընդհանուր իմաստը խելացի էր, ընդհանուր արտայայտութիւնը քաջալերող եւ խրախուսող։

Պակասութիւնները նսեմանում են դրական արժանաւորութիւնների առաջ,

Ես ուրախ տրամադրութեամբ դուրս եկայ ժողովից եւ սկսեցի յաճախել նիստերը։

Վրթին

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 հոկտեմբերի

ՄՈՍԿՎԱ։ Այսօր նահանգական դատարանը վճիռ կայացրեց հիւրանոցի սպասաւոր Գոլդբէրգի գործի առիթով։ Գոլդբէրգ մեղադրվում էր իր կնքաժոր ծառային սպանելու մէջ, որի տանը նա ապրում էր եւ նրա տունը հրդեհելու համար։ Մեղադրութեան գլխաւոր հիմք ծառայեցին այն խօսքերը, որ մահվանից առաջ ասել էր սպանութեան զոհը. նա բժշկի հարցերին պատասխանում էր Գոլդբէրգի անունը տալով։ Երդուեալները մեղաւոր ճանաչեցին նրան սպանութեան մէջ եւ դատապարտեցին 12 տարվայ տաժանակիր աշխատանքների։

ԽԱՐԿՕՎ։ Ռուսաստանի հարաւի լեռնարդիւնաբերողների 26-դ համաժողովում նախապատրաստական յանձնաժողովների նախագահներ ընտրված են լեռնային ինժենէրներ՝ Աւդակով, Շիմանովսկի, Տասկին, Զիմօվսկի, Ֆէրշնէր, Դիպէմար եւ Գօդդաեցկի եւ հաղորդակցութեան ճանապարհների ինժենէրներ՝ Գաեվսկի եւ Ֆիլոնէնկո։ Համաժողովի քննութեան առարկայ է լինելու Դոնեցը մաքրելու նախագիծը։ Համաժողովի պատասխանատու անդամ Ալէքսիեվկու յիշատակը յարգեցին ոտի կանգնելով։

ՑԱՐԻՑԻՆ։ Բելգիական ակցիոնէրական ընկերութիւնը հրաժարվեց էլէկտրական լուսաւորութիւն եւ տրամվայ ու էլէկտրական ինքնաքարշ շինելուց։ 25,000 ռուբլի գրաւականը մնում է քաղաքի օգտին։

ՍԱՐԱՏՕՎ։ Ժուժկալութեան յանձնաժողովը վճռեց միջնորդել՝ արգելելու օղի խմելը փոզոցներում եւ հրապարակների վրա։

ՆՕՎՕԶԷՐԿԱՍԿ։ Այսօր, համարեա երեք ամսվայ չորութիւնից յետոյ, յորդ անձրեւ եկաւ։

Կ. ՊՕԼԻՍ։ Ֆրանսիական դեսպանութեան խորհրդական Բապտից վերջին հեռագիրը ստանալուց յետոյ, որի մէջ թւած են Ֆրանսիայի պահանջները, Բ. Դուռը դիմեց ռուսաց դեսպանատուն՝ օգնութիւն խնդրելով. վերջինս, սակայն, իր պատասխանի մէջ ժամանացոյց արեց, թէ անպայման անհրաժեշտ է բաւարարութիւն տալ ֆրանսիական պահանջներին։

ԼՕՆԴՕՆ։ «Daily News» հաղորդում է, որ յայտնի միս Խոբհուզ, որը ցոյց տուեց, թէ մեծ մահացութիւն է լինում կենտրոնացրած բանակներում, ձերբակալվեց հարաւային Ափրիկայում։

ՇԱՆԳՀԱԻ։ Վերջին տեղեկութիւնների համեմատ, կայսերական պալատը դիտաւորութիւն ունի 20 օր մնալ Կայֆունում, տօնել այնտեղ այրի կայսրուհու ծննդեան օրը եւ ապա ճանապարհ ընկնել Պէկին։

ՊԱՐԻԶ։ Գերմանական դեսպանը իր թագաւորի անունից երախտագիտութիւն յայտնեց Միլիէրանին այն թանգագին ընծայի համար, որ Միլիէրան յանձնարարեց յանձնել կայսրին չնորհակալութեամբ՝ համաշխարհային ցուցահանդէսում անձամբ մասնակցելու համար։ Կայսրը ցուցահանդէս էր ուղարկել անձամբ իրան պատկանող մի քանի գեղարուեստական գործեր։ Միլիէրան սրտագին ուրախութիւն յայտնեց կայսրի ուշադրութեան առիթով։

ՊԱՐԻԶ։ «Հաւասի գործակալութիւնը» հաղորդում է. «Բ. Դուռը տեղեկացրեց, թէ ինքն վճռել է բաւարարութիւն տալ մեր բոլոր պահանջներին։ Դէլկասէ պատասխանեց, թէ հէնց որ Ֆրանսիան ծանուցում կը ստանայ, որ սուլթանը վաւերացրել է Բ. Դրան այդ վճիռը, Ֆրանսիական ծովային դիվիզիան կը հեռանայ Միտիլենայից»։

ՊԷԿԻՆ։ «Ռէյտերի գործակալութեան» այստեղից ուղարկած հեռագիրը այն բանի մասին, որ երբ թէ հանգուցեալ Լիխունգչանգի եւ ռուսաց դեսպանի միջեւ բանակցութիւններ էին սկսվել Մանջուրիայի վերաբերմամբ, ճիշդ չէ հաղորդում գործի էութիւնը։ Այստեղ ժողոված տեղեկութիւնների համեմատ, մանջուրական հարցի վերաբերմամբ Ռուսաստանի կողմից չինացիներին ոչ մի պահանջ չէ արված փետրվար ամսից, երբ բանակցութիւնները ընդհատեց ռուսաց կառավարութիւնը։ Եթէ այժմ նորից հարց էլ է յարուցվել Մանջուրիայի մասին, այդ էլ իրանք չինացիներն են արել, եւ Լէսսար ոչ մի սահմանական պահանջ չէ արել։

ՊԷԿԻՆ։ Լիխունգչանգի մահից անմիջապէս յետոյ, զրեցին կանաչ պալանկինի (ծածկված պատգարակ) թղթէ նկարը 8 ձիերով եւ այրեցին, որպէս զի հանգուցեալի հոգին բոցի հետ միասին երկինք բարձրանայ։ Երէկ առաւօտեան մարմինը դագաղի մէջ դրին։ Կիրակի տեղի կունենայ հանդիսաւոր երկրպագութիւն մարմնին։ Դեսպանները կընդունվին առանձին օր։ Հանգուցեալը կը թաղվի իր հայրենի գիւղում։ Շատ հաւանական է, որ հանգուցեալը կը ստանայ մարկիզի տիտղոս, որ կանցնի նրա աւագ որդուն։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ «Wienertageblatt» եւ «Neues Wienertageblatt» լրագիրների խօսքով, կայսրը չնորհաւորեց արքայորդի Գէօրգիին Կրետէ կղզու վրա տիրող կարգապահութեան առիթով։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագիրը հրատարակեց Հարկօրտի նամակը, որի մէջ նա դատապարտում է կառավարութեան պատերազմ վարելու քաղաքականութիւնը, մանաւանդ վերջին ժամանակներս, եւ մտնացոյց է անում, որ բօէրներին աքսորելը եւ նրանց կալուածքների յարքունիս գրաւումը այնպիսի փաստեր են, որոնք հակառակ են սահմանադրութեան, կորստաբեր են եւ դէմ են պատերազմական եւ թէ քաղաքացիական իրաւունքին։

ՊԱՐԻԶ։ Կ. Պոլսից, ճիշդ աղբիւրներից ըս-

տացված տեղեկութիւնների համեմատ, սուլթանը, ըստ երևոյթին, կամենում է զիջումներ անել եւ այնպիսի առաջարկութիւններ կանէ, որոնք լիապէս բաւարարութիւն կը տան Ֆրանսիայի բոլոր պահանջներին։

ՄԻԻՆԽԷՆ։ Երէկ երեկոյեան, երբ բաւարարական պրինց Լիւդվիգ-Ֆէրդինանդ վերադառնում էր Նիմֆէնբուրգ ամրոցը, նրա կառքը դիպաւ ծառուղիի ծառերից մէկին եւ շուռ եկաւ։ Պրինցը ընկնելու ժամանակ կոտրեց թիակը։ Պրինցի դրութիւնը այսօր գոհացուցիչ է։

29 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց, ի պատասխան Ֆինանսների մինիստրի զեկուցման՝ թէ տեղի ունեցաւ ըէլսային ճանապարհի միացումը չինական արեւելեան երկաթուղու վրա, բաղդաւորացրեց ստատս-սեկրետար Վիտէին հետեւեալ հեռագրով։ «Անկեղծ շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ ուրախալից հաղորդագրութեան համար։ Շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ աշխարհի վրա երկաթուղիական ամենախոշոր ձեռնարկութիւններից մէկի աւարտման համար այդքան կարճ ժամանակամիջոցում եւ անչափ դժուարութիւնների մէջ։ ՆԻԿՈԼԱՑ»։

Ֆինանսների մինիստրի հեռագրական զեկուցումը կազմված էր հետեւեալ խօսքերից. «1891 թւի մայիսի 19-ին Ձեր Կայսերական Մեծութիւնը Վլադիվոստոկում անձամբ դրիք Սիբիրիայի մեծ երկաթուղու առաջին օղակը։ Այսօր, Ձեր Մեծութեան գահ բարձրանալու ամենահանդիսաւոր օրը, այդ ճանապարհը միացված է չինական արեւելեան երկաթուղու գծին։ Համարձակվում եմ ուրախալից սրտով մատուցանել Ձեզ Թագաւոր, հաւատարիմ հպատակութեան շնորհաւորութիւնը պատմական այդ դէպքի համար։ Երկաթուղու գծեր անցկացնելով 2400 վերստից աւելի տարածութեան վրա, Զաբայկալից մինչեւ Վլադիվոստոկ եւ Արաւր, մեր երկաթուղիական ձեռնարկութիւնը Մանջուրիայում աւարտված է, թէպէտ, ի հարկէ, ոչ կատարելապէս, աշխատանքները սկսելուց ընդամենը չորս տարուց յետոյ, չը նայելով բացառական դժուար պայմաններին եւ գծի մեծ մասը քանդելուն անցեալ տարի։ Այսօրվանից նրա ամբողջ երկարութեամբ կարող է տեղի ունենալ ժամանակաւոր երթեւեկութիւն. յոյս ունեմ, որ երկու տարուց յետոյ մնացած բոլոր աշխատանքները կաւարտվեն եւ ճանապարհը կը բացվի մշտական կանոնաւոր երթեւեկութեան համար»։

Հակաժանտախտային յանձնաժողովից յայտարարվում է. «Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղական բժիշկները դժուարանում էին վերջնականապէս որոշել Բաթումում երկու անձանց կասկածելի հիւանդութիւնը, վերոյիշեալ քաղաքն ուղարկվեց Կիեվի Կայսերական հավալտարանի մանագէտ բակտէրիոլոգ պրոֆէսոր Վիսոկովիչ։ Հոկտեմբերի 26-ից ուղարկած հեռագրով կառավարչապետը հաղորդեց, որ հավաձայն պրոֆէսոր Վիսոկովիչի եզրակացութեան, առաջին դէպքը, որ մահով վերջացաւ, առ այժմ դեռ պարզված չէ դիակի սատիկ քայքայման պատճառով. իսկ երկրորդ դէպքը ներկայացնում է լիմֆատիական խուլերի հասարակ թարախակալումն եւ ամենեւին ժանտախտի նշոյլ չունի։ Վերոյիշեալ հաղորդագրութեան հիման վրա եւ ուշադրութեան առնելով այն, որ հիւանդանալու երկրորդ դէպքում ժանտախտի վերաբերմամբ ոչ մի կասկած չէ յարուցվել, իսկ առաջին հիւանդացողի մահվան օրից, որ տեղի ունեցաւ հոկտեմբերի 14-ին, 12 օրից աւելի ժամանակ անցաւ, որի ընթացքում կասկածելի ոչ մի դէպք չեղաւ,— յանձնաժողովը որոշեց վերացնել սանիտարական այն բոլոր միջոցները, որոնք հրամանագրված էին Բաթումի վերաբերմամբ, այդտեղ երեւացող հիւանդութիւնների պատճառով։

ԵԱԿՈՒՏՍԿ։ Կոլիմեան շրջանում գտած մամմոնտը հետազօտելու համար Պետերբուրգի գիտութիւնների ակադէմիայի կողմից ուղարկած արշաւախմբի անդամ Գէրց, մեծ աշխատանքներից յետոյ, հասաւ Միջին-Կոլիմսկ. հինգ օրից յետոյ նա ճանապարհ կընկնի մամմոնտի գտնված տեղը։

ՊԱՐԻԶ։ «Matin» լրագրին Լոնդոնից հաղորդում են, որ այն խնդիրքին, որով Բ. Դուռը դիմեց Անգլիային, հիմնվելով 1878 թւի դաշնագրի վրա, անգլիական մինիստրութիւնը պատասխանեց, որ Անգլիան չէ կարող միջամտել, որովհետեւ այժմեան ընդհարումը առաջ է բերել Թիւրքիան։ Բայց եթէ Ֆրանսիան աւելի հեռու գնար եւ ձեռք տար Թիւրքական ուրիշ կալուածներին, այն ժամանակ Անգլիան պատրաստ կը լինէր առաջարկել Բ. Դրանը իր ծառայութիւնները ֆրանսիական կառավարութեան հետ ունեցած ընդհարումների ժամանակ։

Կ. ՊՕԼԻՍ։ Ֆրանսիական նաւատորմի Միտիլէնա հասնելու լուրը այն ժամանակ, երբ Իլդիզ-Քիոսկում կարծում էին, որ նա կէս ճանապարհից վերադարձել է, Բ. Դրան մեծ շրջաններում մեծ շփոթութիւն առաջացրեց։ Այն դպրոցների թիւը, որոնց գոյութիւնը Ֆրանսիան պահանջում է ընդունել, հասնում է մօտ վեց հարիւրի։ Թիւրքաց լրագիրների տեղեկութիւնների համաձայն, հրատարակված է իրադէ, որ հատատում է քաղդէացիների պատրիարք Էմմանուէլ Թումայի ընտրութիւնը։

ՊԱՐԻԶ։ Այստեղի քաղաքական շրջաններում հաւատացնում են, որ Ֆրանսիական նաւատորմը կը հեռանայ Թիւրքաց ջրերից հէնց որ կը հրատարակվի համապատասխան իրադէն. բայց եւ այնպէս, նաւատորմը կը մնայ Թիւրքաց ափերի մօտ, մինչեւ որ Բ. Դուռը չի սկսի ի կատար ածել իր խոստումները։

ԼՕՆԴՕՆ։ Կօրնվալեան դուքսը ստացաւ Ուէլսի իշխանի եւ Զէտերեան կոմսի տիտղոս։

ՊԷԿԻՆ։ Այստեղ ստացված է հրովարտակ, որով Պէչիլի նահանգապետ Իւան-Շիկայ եւ մինիստրութեան անդամ Վան-Վէն-Շաօ, որը Լիխունգչանգի փոխանորդն է, բանակցութիւնների համար լիազօրներ են նշանակված. նրանց հրամայված է անմիջապէս ուղեւորվել Պէկին։ Երկրորդ հրովարտակով Լիխունգչանգ ստացաւ մարկիզի տիտղոս Լի-Վէն-Զունի նոր անունով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
Երկուշաբթի, հոկտեմբերի 26-ին
Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը
կը ներկայացնէ
Առաջին անգամ նոր պիէս
ԵՒԳԻՆԷ
Դրամա 3 արար. հեղ. Շիրվանզադէի
Վերջը
ԾԵՐՈՒԿԸ ԿԱՏԱԿՈՒՄ Է
Մասնակցում են՝ տ. Աւետեան, օր. Գուլազեան, տ. տ. Զաբէլ, Մայոուրեան, Փառանձեմ, պ.պ. Աբէլեան, Ալիխանեան, Աւետեան, Զարիֆեան, Մէլիք-Յովսէփեան, Պետրոսեան, Ստեփանեան, Վրոյր։
Սկիզբն է ճիշդ ժամը 8-ին
Տեղերի գները իջեցրած են։ 2—2

ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԻ ԹԱՏՐՕՆ
Կիրակի, հոկտեմբերի 28-ին,
կը լինի երկրորդ
Յերեկվայ հանրաժաչելի ժողովրդական
ԿՕՆՑԷՐՏ
Խ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
Մասնակցում են պ. պ. Կ. Գապեան, Ա. Յակոբջանեան, Տ. Տէր-Առաքելեան, եւ ցուցահանդէսի հայկական խառն խումբը։
Տոմսակները 10 կ., 20 կ., 30 կ., 50 կ. եւ օթեակ—1 ր. վաճառվում են նոյն օրը ժամը 9-ից թատրոնի կասայում։ 2—2

ՀՐԱՒԷՐ
Ամսիս 28-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին, Զուղուրէթի ս. Աստուածածնի եկեղեցում ժողով է լինելու, մի երկու բացատրութիւններ ստուգելու, ուստի սրանով յարգոյ ծխերը հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցում՝ ժողովին մասնակցելու համար։
Գործակալ բ. ժամի Թիֆլիսի՝
Գրիգոր ա. ք. Մանդակունի

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
յարմարեցրած նորոսների համար
Գինն է 15 կ.
Դիմել՝ Армавиръ (Куб. Обл.), Регенту Симеону Шаанянцъ. 2—4

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, հոկտեմբերի 30-ին, աւագների խորհրդի կարգադրութեան համաձայն, կը լինի
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅ
(28 եւ 30) 1—2

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
«Մայրենի լեզու», Ղ. Աղայեանի ա. տարի, այբբենարան—25 կ.
«Մայրենի լեզու» Ղ. Աղայեանի, բ. տարի 30 կ.
«Մայրենի խօսք», դասագիրք կրտսեր դասարանների համար, Լ. Սարգսեանի եւ Կ. Կուսիկեանի 70 կ.
«Մայրենի լեզու» (պատկերներով), ա. տարի, Արաբաջեանի 30 կ.
«Եկեղեցական պատմութիւն» (ժամանակագիրներից), Օրբելիի 1 ր.
«Կրօնի դասագիրք», Սահակ քահ. Սահակեանի, ա. բ. գ. տարի 70 կ.
«Հայառօտ քարոզներ», Ն. ք. Ղամազեանի 1 ր.
«Քրիստ. վարդապետ.», » » 20 կ.
«Տարրական երկրաչափութիւն», թարգմ. Հ. Զալալեանի 1 ր. 20 կ.
«Տարրական ֆիզիկա», Պետերբուրգի հայ ուս. տպագր. 60 կ.
«Ընտիր հատուածներ», Է. ք. Նազարեանի 1 ր.
«Նահապետական եւ հայրենի աշխարհ», Ս. Մանդինեանի 60 կ.
«Դասագիրք ֆրանս. լեզուի» (ռուս.-ֆր. 60 կ.
«Տրամաբանութիւն» Ի. Յարութիւնեանի» 1 ր.
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гутенбергъ», Г. Галустяну, Лорисъ.-Меликовская, № 11. 1—3

ԳՈՒԴԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ
ստէրէոսկոպիկ ժողովածուի I եւ II մասերը (Հաղբատ, Սանահին, Դսեղ, Սեւորդեաց Ձոր) հրատարակված է։ Իւրաքանչիւր հատորը բաղկացած է 24 պատկերներից։ Գինը 6 ր. 50 կ.։ I եւ II մասերը միասին գնողները վճարում են 11 ռուբլի։
Ցանկացողները միշտ կարող են տեսնել այդ պատկերները «Գուտտէնբէրգ գրավաճառանոցում, Լօրիս-Մելիքովսկայա փողոց։ 1—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
Կաթիլ Ֆլամարիոնի
ՈՒՐԱՆԻԱ
Աստղագիտ. վէպը
Թարգ. ֆրանսերէնից Հ. Առաքելեանի
Գինն է 1 ր. 50 կ. 1—10

ԱՏԱՄՆԱԲՈՑԺԿԻՆ
Ս. Ա. ԲԱՐԳ
ընդունում է ատամների եւ բերանի հիւանդութիւն ունեցողներին, դնում է արհեստական ատամներ, հանում է ատամները, պլոմբում է եւ այլն։ Ընդունելութիւնը 8-ից մինչեւ 2 ժամ առաւօտեան եւ 4-ից մինչեւ 7 ժամը երեկոյեան։ Գուշկինեան փողոց, № 21, տուն Կուկուջանովի։ 8—15

ԱՄԵՆԱՑԱՑՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՐՕՑԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ԳԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՑՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՑԼՆ, ԵՒ ԱՑԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։
ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՑՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкалное депо Б. М. Мириманіана,
ТИФЛИСЪ.
Дворцовая у З. Банка.
(կիր.)

ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ
„ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ“
Ընկերութեան փայերի սահմանագրութիւնը (գեղատան, հանքային ջրերի գործարան եւ այլն) եւ 10%-ի առաջին վճարը (հինգ ռուբլի) ընդունվում են Թիֆլիսի Առեւտրական Նաւթանի, գաւթում, ժամի 10-ից մինչեւ 2½-ը, նոյնպէս եւ պրոմիզոր Սահակեանի եւ ընկ. դեղաֆառական պահեստում, Վօրոնցովի արձանի մօտ։ 2—3

ԹԷՅԻ ԱՌԵՒՏՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Վ. ՎԻՍՈՑԿԻ ԵՒ ԸՆԿ.
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
Բաժանմունքը Թիֆլիսում—ՄԷՑԴԱՆ, երկաթափառների փողոց, տելեֆոն № 432։
Նորին Մեծութիւն Պարսից Շահի պալատի մատակարարներ։
Հիմնական դրամագլուխն է 6,000,000։
Առեւտրի տարեկան շրջանառութիւնը—20,000,000։
Շնորհիւ մեր թէյերի բարձր յատկութեան, որոնք առանձնապէս նշանաւոր են իրանց զօրեղ հոտով, քնքոյշ համով եւ մուգ գոյնով, մեր առեւտրական տունը գրաւել է Եւրոպայում առաջին տեղերից մէկը իր ծախած թէյի քանակութեամբ։
Մեր խանութներում, որոնք գտնվում են Մոսկվայում եւ Օդեսայում, սեփական շինութիւնների մէջ, պարապում են աւելի քան 1500 հոգի։
Մեր առեւտրական տան թէյերը ծախվում են Ռուսաստանի բոլոր լաւագոյն խանութներում։
Մեր թէյերն առնելու ժամանակ՝ խնդրում ենք պ.պ. գնողներին ուշադրութիւն դարձնել մեր առեւտրական նշանի ճշդութեան վրա,—նաւ,—որ հատատված է կառավարութիւնից եւ պահանջել Վիսոցկու թէյերը նաւի նշանով։
Ընկերութեան Վարչութիւնը գտնվում է Մոսկվայում, բաժանմունքները՝ Օդեսայում, Վարշավայում, Ռոստովում Դոնի վրա, Եկատերինբուրգում, Խարկովում, Թիֆլիսում, Ռիգայում։ Վիլնոյում եւ Սիմֆերոպոլում։
Ընկերութեան հայտնի թէ Մոսկվայի եւ թէ բաժանմունքների համար—Товарищество чайной торговли В. Высоцкій и Ко.


3—10

Позволено цензурою, Тифлисъ, 27 Октября 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.